ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳՅՈՒԼԽԱՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ ՍՏԵՓԱՆԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՌԱՆՁՆԱՏՆԵՐԻ ԻՆՏԵՐԻԵՐԻ ԴԻԶԱՅՆԸ

Ժէ.00.03 - «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտությամբ արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2014

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСКУССТВ

ГЮЛЬХАСЯН БАГРАТ СТЕПАНОВИЧ

ДИЗАЙН ИНТЕРЬЕРОВ СОВРЕМЕННЫХ ОСОБНЯКОВ АРМЕНИИ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата искусствоведения по специальности 17.00.03 – “Изобразительное искусство, декоративное и прикладное искусство, дизайн”

ЕРЕВАН – 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում:

Գիտական ղեկավար՝ ճարտարապետության դոկտոր
Դոլուխանյան Լորետա Կարենի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր
Քերթմենջյան Դավիթ Գրիգորի

արվեստագիտության թեկնածու
Հարությունյան Մարտին Վարդանի

Առաջատար կազմակերպություն՝ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2014թ. հունիսի 5-ին, ժամը 14.00-ին, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի 016 Արվեստագիտության մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թ. մայիսի 5-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,

արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ **Ասատրյան Ա. Գ.**

Тема диссертации утверждена в Ереванской художественной государственной академии.

Научный руководитель - доктор архитектуры
Долуханян Лорета Кареновна

Официальные оппоненты - доктор архитектуры, профессор
Кертменджян Давид Григорьвич

кандидат искусствоведения
Арутюнян Мартин Варданович

Ведущая организация - Армянский государственный педагогический университет им. Х.Абовяна

Защита диссертации состоится 5-го июня 2014г. в 14.00 часов на заседании специализированного совета 016 Искусствоведение ВАК РА, действующего в Институте искусств НАН РА (адрес: 0019, Ереван, проспект Маршала Баграмяна 24/4).

С диссертацией можно ознакомиться в библиотеке Института искусств НАН РА.

Автореферат разослан 5-го мая 2014г.

Ученый секретарь специализированного совета,

доктор искусствоведения, профессор **Асатрян А. Г.**

Աշխատանքի ընդհանուր բնութագիրը

Տվյալ ուսումնասիրության թեման նվիրված է վերջին երկու տասնամյակում Հայաստանի Հանրապետությունում կառուցված մենատների՝ մասնավորապես դրանց ինտերիերների գեղարվեստական ձևավորմանը:

Թեմայի արդիականությունը: Հայ ժողովրդի պատմության ողջ ընթացքում տունն ու դրա ճարտարապետական-կոնստրուկտիվ ու ներքին գեղարվեստական հարդարման համակարգերը կարևորագույն տեղ են զբաղեցրել: Տունը և նրա ներքին հարդարանքը արտահայտել են ժամանակի սոցիալ-հասարակական, ազգագրական և գեղարվեստական միտումների պատկերը, արտացոլել հայ հասարակության նիստուկացի, ճաշակի ու կենցաղավարության առանձնահատկությունները: Պատմության ողջ ընթացքում փոփոխական հաջողություններով հայոց տան ներքին ու արտաքին հարդարման սկզբունքներն ու խնդիրները փոփոխվել են, անընդհատ կրել ձևափոխումներ՝ պահպանելով հիմնական և կարևորագույն չափանիշները: Ամեն ժամանակաշրջան դրսևորել է մշակութային և սոցիալական իր հատկանիշները, տարբեր քաղաքակրթություններից կրած ուղղակի և անուղղակի ազդեցությունները, իշխող դասակարգի ճաշակը, տարածված տենդենցները և համապատասխան նորարարությունները: Այս առումով մեզ համար այժմ խիստ հետաքրքրական ու կարևոր է դառնում այդ ամբողջ պատմական ժառանգության հիմքի վրա ժամանակակից պատկերացումներն ու միտումները դիտարկելն ու պարզելը, քանի որ բացի գեղարվեստա-գեղագիտական ու ազգագրական նշանակությունից, հայոց բնակելի տան կառուցվածքային ու կիրառական կողմը նույնպես անչափ հետաքրքիր է, քանի որ մեծապես արտացոլում է ընտանիք-հասարակություն կապի բազում առանձնահատկությունները: Մեր ուսումնասիրության առանցքային կարևորությունը կայանում է Հայաստանում մենատուն երևույթի ծագման, զարգացման և ներքին հարդարման հիմնական սկզբունքներն ու տենդենցները բացահայտելու, ուսումնասիրելու և կիրառելու մեջ: Այս ամենը ներառում է մեծապես ունևոր և իշխող խավի բնակելի մենատների ուսումնասիրությունը, քանի որ վերը նշված բոլոր տենդենցներն ու հատկությունները հիմնականում հատուկ են եղել այս շերտի ներկայացուցիչների կենցաղին: Ժամանակակից ՀՀ-ում, ինչպես ողջ աշխարհում վերջին տասնամյակի ընթացքում դրսևորվում են խիստ բազմազան ու բազմաշերտ մշակութային գործընթացներ, ինչից զերծ չի մնում, նաև, բնակելի ինտերիերի դիզայնը: Ընդունված և լայնորեն կիրառելի են համարվում համաշխարհային փորձի, ժառանգության և արդի տենդենցերի վառ դրսևորումները: Ժամանակակից մարդու սոցիալ-հոգեբանական պահանջներն ու ինֆորմացիոն ներհոսքի ծավալները իրենց ուրույն դրոշմն են թողնում բնակելի տան ընդհանուր տեսքի, ֆունկցիայի և հարմարավետության

մասին առկա պատկերացումների վրա: Թեմայի ընտրությունը կարևորվում է նաև բնակելի միջավայրի ունեցած ահռելի հոգեբանական, հասարակական և քաղաքացիական ազդեցություններով, մանավանդ ՀՀ ներկա կարգավիճակի պարագայում, երբ ժամանակակից աշխարհը թելադրում է ավանդույթների արդիականացում և գերարագ տրանսֆորմացիաներ: Այս հարցի առնչությամբ խիստ ակտուալ է, նաև, հենց այդ ավանդական մանրամասների վերածնման ջանքերին, առանձին ազգային դրսևորումներին հետևելը, ընդհանուր ֆոնին դրանք դիտարկելն ու առկա ընդհանուր պատկերը տեսնելը:

Ուսումնասիրության նպատակը և գիտական խնդիրները: Տվյալ աշխատանքի նպատակն է՝ հիմնավորված մասնագիտական վերլուծության եղանակով ուսումնասիրել ժամանակակից հայկական առանձնատների ինտերիերի դիզայնը:

Ատենախոսության գիտական խնդիրներն են.

1. Ուսումնասիրել ժամանակակից ինտերիերների բնույթը, դասակարգել դրանք:
2. Ուսումնասիրել ինտերիերների կազմավորման (ձևավորման) բնույթը առանձին օրինակներով՝ կախված տարբեր գեղագիտական հայացքներից:
3. Ուսումնասիրել Հայաստանի տարբեր շրջանների ավանդական ժողովրդական տների ինտերիերների ձևավորման հիմքերը և նրանց ազդեցությունը ժամանակակից ինտերիերներում:
4. Ուսումնասիրել Հայաստանում առկա ժամանակակից առանձնատների ինտերիերների գեղարվեստական ձևավորումը միջազգային փորձի համեմատությամբ:

Ինտերիերի գեղարվեստական ձևավորման միջազգային պատմական զարգացումն ուսումնասիրելու համար ընտրված օրինակներն են՝ քարանձավային բնակատեղիները, հունական պերիստիլը, հելլենիստական բնակելի մենատունը, հռոմեական դոմուսը, հռոմեական վիլլա՝ Պոմպեյի և Հերկուլանումի օրինակներով, «Միստերիաների», «Բոսկո ռեալե», «Վիրաբույժի» վիլլաները, «Փավնոսի տունը», ինչպես նաև՝ «Լիվիայի տունը» Հռոմում և «Դիոնիսոսի» վիլլան Կիպրոսում, իտալական պալացցոները՝ Պալլացո Ռուչելային, Վերածննդի անգլիական առանձնատները, Հռոմի, Վենետիկի վիլլաները, ֆրանսիական քաղաքային և մերձքաղաքային տներն ու առանձնատները (Օտել, Շատո): Մոդեռնի հիմնադիր Բելգիացի ճարտարապետ Հենրի Վան դե Վելդեի Բրյուսելի մոտակայքում գտնվող առանձնատունը: Մոդեռնի վառ օրինակներից՝ 1902 թ.-ին ճարտարապետ Շեխտելի կողմից Մոսկվայում կառուցված մեծահարուստ Ռյաբուշինսկու առանձնատունը, ճարտարապետ Վալտեր Գրոպիուսի ԱՄՆ-ի Մասաչուսեթս նահանգի մենատունը և հայտնի ռուս ճարտարապետ Կոնստանտին Մելնիկովի Մոսկովյան առանձնատունը:

Հայկական ժամանակակից առանձնատների ինտերիերի գեղարվեստական ձևավորումն ուսումնասիրելու համար ընտրված առավել բնորոշ առանձնատներ.

XIXդ. վերջից- XXդ. հայկական քաղաքային և գյուղական (համայնքային) առանձնատների օրինակներ: Ժամանակակից առանձնատներ Երևանի կենտրոնում, Դավիթաշեն, Այգեձոր, Վահագնի թաղամասերում: Առանձնատներ Կոտայքի մարզում, Ծաղկաձոր, Աբովյան քաղաքներում, Զորաղբյուր գյուղական համայնքում, Արագածոտնի մարզում՝ Թալին քաղաքում:

Գիտական նորույթն ու գործնական նշանակությունը: Տվյալ աշխատության սահմաններում առաջին անգամ փորձ է արվում ուսումնասիրել հայոց բնակելի մենատան ձևավորման և զարգացման ողջ պատմության ընթացքը համաշխարհային փորձին զուգահեռ, որի հիման վրա դիտարկել հայկական ժամանակակից առանձնատների ներքին տարածությունների գեղարվեստական ձևավորումը, պատմական ու արվեստաբանական-համեմատական վերլուծության եղանակով հետևել այդ համակարգի ձևավորմանն ու զարգացման արդի միտումներին: Կատարված ուսումնասիրությունների հիման վրա հնարավոր կլինի դիզայնի պրակտիկ ոլորտում ձեռք բերել համապատասխան փորձառություն և կատարել որոշակի ուղղակի ներդրումներ: Ըստ էության, այս աշխատության գործնական նշանակությունը կարող է լինել արված աշխատանքի և ձեռք բերված փորձի հիման վրա ապագայում պրակտիկ առաջարկների ու որոշակի ձևաչափերի վերհանումը՝ մասնագիտական դիտարկումները ժամանակակից միտումներին հարմարեցնելու ու ծառայեցնելու ուղղությամբ: Այն հետագայում կարող է ծառայել նաև որպես ինտերիերի դիզայնին նվիրված ուսումնական ձեռնարկ, քանի որ պարունակում է մենատուն երևույթի ներքին և արտաքին հարդարանքի զարգացման համաշխարհային պատմությունը, հայոց բնակելի միջավայրի պատմական առանձնահատկությունները և ժամանակակից տենդենցների ամփոփ մեկնաբանումը:

Թեմայի մշակվածության աստիճանը: Հայկական ժամանակակից առանձնատների ինտերիերի դիզայնը դեռևս չուսումնասիրված, սակայն խիստ կարևոր դաշտ է՝ հասկանալու համար հայ հասարակության, թեկուզև ոչ մեծ հատվածի, գեղագիտական ճաշակն ու պատկերացումները, կացութաձևի առանձնահատկություններն ու կենսամակարդակի վիճակը: Անկախությունից հետո ՀՀ-ում կառուցված առանձնատների ու դրանց ինտերիերի գեղարվեստական ձևավորումը, այդուհանդերձ, դեռևս հավուր պատշաճի դիտարկված ու քննված չէ, չկան տների տեսակների, տեղադրության և հարդարման համակարգին բնորոշ առանձնահատկությունների դասակարգումներ և վերլուծություններ: Այս փաստը, նախևառաջ,

պատճառաբանվում է անձնական կյանքի իրավունքով և համապատասխան նյութի բացակայությամբ, գուցե նաև մոտիվացիայի պակասով: Այս է պատճառը, որ տվյալ աշխատությունում հիմնականում հիմնվել ենք ինտերիերի գեղարվեստական ձևավորման զարգացման պատմական փուլերի ուսումնասիրության վրա, որոնց ոճային միտումները և դրսևորումները մեզ հնարավորություն են տալիս մասնագիտական արվեստաբանական վերլուծության եղանակով դիտարկել և բացահայտել ժամանակակից հայկական առանձնատների ինտերիերի դիզայնի տարածված նկրտումներն ու միտումները:

Ատենախոսության մեթոդը: (Տե՛ս սեղմագրում ընդգրկված դիագրաման) Ատենախոսության մեթոդը ինտերիերների ուսումնասիրությունն է, ընդհանրացումը և դիտարկումը վերջին հարյուրամյակի դիզայներական փորձի համեմատությամբ (ինչպես արվեստագիտական, այնպես էլ կատարողական տեսանկյունից): Անցկացնելով համեմատական-պատմական ու արվեստաբանական վերլուծություն՝ համաշխարհային փորձի հիման վրա ջանացել ենք ցույց տալ ժամանակակից հայկական առանձնատների զարգացման ընթացքը, միջավայրաստեղծ գործոնների ակունքներն ու ակտուալ մարտահրավերները: Ելնելով այն փաստից, որ այս խնդիրը դեռևս չի արծարծվել, մեր ուսումնասիրությունները կատարելիս հիմնվել ենք համաշխարհային փորձի, գիտական մեթոդների և աղբյուրագիտական նյութի վրա, ինչպես նաև դիտարկել ենք հինգ տասնյակի հասնող ժամանակակից մենատներ, որոնք կառուցվել են ՀՀ-ում հայ ճարտարապետների կողմից և հարդարվել հայ դիզայներների մտահղացումներով:

Այնուամենայնիվ, որոշակի ընդհատումներով, երբեմն աղքատիկ պատմական, հնագիտական ու աղբյուրագիտական նյութերի հիման վրա հնարավոր դարձավ ուսումնասիրել և ամփոփ ներկայացնել հայոց բնակելի մենատան զարգացումը ու վերջինիս ներքին հարդարանքի գեղարվեստական, կիրառական ու խորհրդաբանական առանձնահակությունները:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատությունը բաղկացած է ներածությունից, երեք հիմնական գլուխներից, եզրակացություններից և պատկերագրքից:

Առաջին մասում քննվում է բնակելի մենատան ինտերիերի հարդարման համակարգերի զարգացման համաշխարհային պատմությունը՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Երկրորդ գլխում մանրամասն ներկայացված են բնակելի տան միջավայրաստեղծ, հոգեբանական, էսթետիկ և սոցիալական գործոններն ու բաղկացուցիչները՝ լույսի և գույնի կիրառության կարևորությունը, կահույքի, սպասքի, գործվածքի և մի շարք այլ ատրիբուտների դերը: Երրորդ մասում արդեն անդրադառնում ենք հայոց բնակելի մենատներին՝ հայկական ժողովրդական տանն ու դրա հիմքի վրա առաջացած

անհատական առանձնատան պատմությանը: Այս մասում քննվում են հայկական քաղաքային և մերձքաղաքային բնակելի տները, դրանց պատմությունը և կրած տրանսֆորմացիաները վերջին երկու տասնամյակների ընթացքում:

Ատենախոսության ծավալը կազմում է 129 էջ՝ ներառյալ ներածությունը, երեք գլուխները և եզրակացությունները: Աշխատությունն ունի նաև 91 էջից բաղկացած պատկերագիրք:

Ուսումնասիրության աղբյուրները

Օգտվել ենք միջազգային և տեղական աղբյուրագիտական նյութերից.

1. Հնագիտական գտածոներ,
2. Պատմական վկայություններ,
3. Արվեստի այլ ճյուղերի նմուշների հաղորդած տեղեկություններ,
4. Տեսական գրականություն,
5. Անձամբ կատարել ենք արվեստաբանական-համեմատական

վերլուծություններ:

Ներկայացված է հայերեն, ռուսերեն և օտար լեզուներով օգտագործված գրականության ցանկը՝ 135 անուն, ներառյալ համացանցի աղբյուրները:

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ
ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Քարանձավը մարդու առաջին կացարանն է: Քարանձավային բնակատեղիներն ու առանձին համալիրները, որ մեկ բառով բնորոշվում են որպես քարանձավային մշակույթ, հանդիսանում են մարդու առաջին կացարանները: Սկզբում լինելով ընդամենը բնության արհավիրքներից ու գազաններից պաշտպանվելու լավ միջոց, դրանք հետզհետե վերածվում են ապահով և հարմարավետ բնակարանների, սկսում են հարդարվել և հարմարեցվել այդտեղ ապրող ընտանիքների կարիքներին ու պահանջներին: Քարանձավային մշակույթի կարևորագույն դրսևորումներից մեկը ժայռապատկերային գեղանկարչությունն էր, որը կարելի է, թերևս, համարել կերպարվեստի առաջին կիրառությունն ինտերիերում:

Առանձնատան դասական տիպերը և ինտերիերների գեղարվեստական ձևավորումը: Բնակելի տան զարգացման և ինտերիերի ձևավորման առաջընթացի պատմության մեջ հաջորդ կարևոր արձանագրելի փուլը, եթե կարելի է ասել՝ կայանը, վերաբերում է անտիկ մշակույթին: Իրար հաջորդելով արագ առաջընթաց ու զարգացում են ապրում հելլենիստական պերիստիլը, հունական քաղաքային տունն ու հռոմեական դոմուսը: Ունենալով ներքին ճոխ

հարդարանք՝ այս համակարգերը իրենց մեջ ներառում են իրար հաջորդող քաղաքակրթությունների ավանդույթներն ու մեծ փորձը: Լայնորեն զարգանում է կահույքագործությունը, փայտե ճոխ կարասին ընդելուզվում է փղոսկրով, ոսկով և թանկարժեք քարերով: Առանձին սենյակների հարդարման մեջ գերակշռում են որմնապատկերները, քանդակային կոմպոզիցիաները, անձնական օգտագործման բազմաթիվ հետաքրքիր ատրիբուտները: Քննվում են նաև անտիկ շրջանի հայկական բնակելի տների որոշ նմուշներ՝ պահպանված հնագիտական և պատմագիտական աղբյուրների հիման վրա դուրս բերելով դրանց ինտերիերի ձևավորման մոտավոր և ոչ այնքան ճշգրիտ պատկերը:

Միջնադարյան բնակելի տան առանձնահատկությունները: Հռոմեական կենսաձևի ու վիլլաների ավանդույթը և բնակելի տարածքների շքեղ հարդարանքը առավել երկար պահպանվում են Բյուզանդական կայսրությունում (V-XV դդ.): Արևմտյան Եվրոպայում հաստատվում է դղյակ-ամրոցային հողատիրական կեցության ձևը: Նվազում է քաղաքների դերը: Քաղաքային տարածքների կրճատման և կյանքի կանոնների կտրուկ փոփոխությանը զուգընթաց հսկա փոփոխություն են կրում նաև բնակելի տան և մենատան ծավալա-տարածական հորինվածքը և ներքին հարդարանքը: Միջնադարի ինտերիերը խստաշունչ էր և առանց ավելորդությունների: Նույնիսկ հարուստների առանձնատները համարյա թե զուրկ էին դեկորատիվ էլեմենտներից, ինչը թողնում էր միաժամանակ հզորության և պարզության տպավորություն: Պատերը ծածկված էին հիմնականում միատոն մոխրագույն, կաթնագույն կամ դեղնաշագանակագույն ներկով: Առաստաղը սովորաբար իր փայտե ներդիրներով պատերի հետ նույն գույնն ուներ: Երբեմն հարմարավետությունը և ջերմացնող մթնոլորտը ձեռք էր բերվում հատկապես գորգերի և տարբեր տեսակի գործվածքեղենի միջոցով: Հատակները մարմարից էին, արվում էին խճանկարներ բնական քարով: Օգտագործվում էր նաև մանրահատակ: Ժամանակի ընթացքում, միջնադարում՝ ռոմանական և գոթական ոճերի տարածման շրջաններում, հարուստների տների շքասրահները սկսում են զարդարվել որմնանկարներով, որտեղ գերակշռում էին ծաղկեփնջերի կամ վերացական զարդանախշերի մոտիվները:

Առանձնատան զարգացումը XV-XIX դդ.: Վերածնունդ: XV-XVI դդ. մշակութային արժեհամակարգի որակական թռիչքները մեծապես դրսևորվում են հատկապես իտալական կերպարվեստում և ճարտարապետության մեջ: Նոր հասարակարգը քաղաքային միջավայրում նոր խավ և նոր հարաբերություններ է ձևավորում: Հասարակական կյանքի և կենսաձևի փոփոխությունն ուղեկցվում էր նաև ընտանեկան հարաբերությունների և ինտիմ կյանքի ձևափոխմամբ: Առօրյա կյանքն ընկալվում և կազմակերպվում էր նոր ձևով: Բնականաբար, այս նոր տիպը պետք է թելադրեր բնակելի տան ճարտարապետության նոր

կոնցեպցիա և ֆունկցիոնալ տարբեր վերադասավորություն, որն արտահայտում էր հարուստ, աշխույժ, ձեռներեց ու ձեռնհաս անհատի կենսական ու կենցաղային նախասիրությունները, նրա հասարակական բնութագիրը: Ուշադրության կենտրոնում է հայտնվում, առաջին հերթին՝ բնակելի տունը, նրա ներքին հարդարանքը և առօրյա կենցաղի կազմակերպումը: Իտալիայում ի հայտ են գալիս, այսպես կոչված, պալացցոները, որոնք լավագույնս արտահայտում են վերոնշյալ միտումները: Ներքին տարածքի կազմակերպման հիմնական տարրերն են. համեմատաբար փոքր չափի սենյակների նախընտրությունը, գլխավոր սենյակներին հարող փոքրիկ տարածքների բազմապատկումը, սենյակների հաղորդակցման նոր համակարգի ստեղծումը:

Վերածննդի առանձնատան ներքին հարդարանքի հիմնական բնութագիրը պարզությունն է, մոնումենտալությունը, հանդիսավորությունը և ինտիմությունը, որոնց ձեռքբերման համար առատորեն գործածվում են գեղարվեստական վերամշակման ենթարկված անտիկ շրջանի կառուցվածքային տարրերը: Կերպարվեստը նոր բովանդակությամբ և նշանակությամբ տեղավորվում է բնակելի ներքին տարածքի հարդարանքում: Միաժամանակ, ինտերիերներն առանձնանում են տարածական հիացուցիչ էֆեկտներով և հարդարանքի հարուստ շքեղությամբ, մարմարյա հսկա սանդուղքներով և կերպարվեստի ստեղծագործությունների առատությամբ: Առաստաղները և առաստաղին հարող պատերի հատվածները, երբեմն նաև պատերը, ձևավորվում էին բուսական կամ երկրաչափական զարդանախշով: Բազմամակարդակ առաստաղների կենտրոնական հատվածը նկարազարդվում էր: Հաճախ առաստաղը ձևավորվում էր քառանիստ կամ բազմանիստ փայտե խորացումներով՝ կեսոններով, որոնք յուրահատուկ հմայք էին հաղորդում ինտերիերին: Հաճախ էին օգտագործվում գրիֆոնների, առյուծների գլուխներով որմնասյուները: Ժամանակակից առանձնատան ձևավորման վրա իրենց ազդեցությունն են թողել նաև Անգլիական վերածննդի օրինակները: Այս շրջանի անգլիական ճարտարապետությունը բաժանվում է 2 փուլի՝ Թյուդորական (1485-1558), և Ելիզավետա I-ի ժամանակաշրջան (1558-1608):

Ի տարբերություն Վերածննդի դասական շրջանի, **բարոկկոյի ոճը** հատուկ է դեկորատիվ հագեցվածությամբ և արտառոց, դինամիկ, արտահայտիչ ձևերի գերակայությամբ, հարդարանքի երբեմն ճնշող, ծանր ճոխությամբ: Բարոկկոյի շրջանի ինտերիերին հատուկ են թաղակերպ առաստաղները՝ կլոր կամ օվալաձև լուսամուտներով, պատերը ծածկվում են թանկարժեք մետաքսե պաստառներով, որոնք ընդմիջվում են փայտյա երիզներով և փորագրված պանելներով (փայտյա դետալներով): Արժևորվում է արվեստի առարկաների համար առանձին սրահ ունենալը՝ տնական թանգարան, այսպես կոչված

կունստ-կամերա՝ հռոմեական պինակոթեկի սկզբունքով, որտեղ հավաքվում են ամենատարբեր տիպի ստեղծագործություններ՝ անկախ ոճից, ժամանակից, երկրից, տեսակից: Վերածնունդի շրջանում տարածված կաղնեփայտին փոխարինում է ընկուզենին, որն ավելի հեշտորեն էր ենթարկվում փորագրության տեխնիկային: Կանացի ինտերիերների համար ստեղծվում են բազմապիսի առարկաներ և կահույքի նոր ձևեր. գաղտնատուփեր ունեցող սեկրետերներ, նուրբ գրասեղաններ, հայելիով զարդասեղաններ, նկարչության և ձեռագործության համար աշխատասեղաններ: Այս շրջանից սկսած, հանդես է գալիս գարնիտուրի գաղափարը, այսինքն՝ տարբեր կտորներից բաղկացած կահույքի կոմպլեկտը, որի գեղարվեստական մշակումը, ձևերը, նյութը և գույները ենթարկված են ընդհանուր ներդաշնակ հորինվածքի: Մեծ տարածում է ստանում կահույքի նոր տեսակ՝ կաբինետը, որ ոտնակների վրա կանգնած մեծ պահարան է՝ բազմաթիվ դռներով ու դարակներով, նրբագույն քանդակային հարդարանքով, ոսկեզօծ կամ բրոնզե դետալներով և գունավոր փայտյա խճանկարով:

Կլասիցիզմ: Որպես ճարտարապետական նոր ոճ Կլասիցիզմը իր զարգացման գագաթնակետին է հասնում XVIII դարում: Կլասիցիստական առանձնատան հիմնական առանձնահատկությունը վերադարձն էր անտիկ ճարտարապետական ֆորմաներին, որպես ներդաշնակության, պարզության, խստության չափանիշ: Ընդհանուր առմամբ կլասիցիզմի ճարտարապետությանը բնորոշ է օրինաչափ հատակագիծը և ծավալային ֆորմայի պարզությունը: Բնակելի տունը ընդգծված բաժանում է ինտիմ, անհատական կյանքը, անձնական ազատությունները, գողտրիկ ներաշխարհը դրսի աշխարհից: Ճարտարապետները աշխատում են տան ներսում նոր պրիվատ տարածքներ ստեղծելու խնդրի վրա: Ընդհանրապես կլասիցիզմի դարաշրջանի ինտերիերները առանձնանում էին ներդաշնակությամբ, շքեղությամբ և մեծությամբ: Այս ինտերիերներում նկատելի է հստակ ֆունկցիոնալ գոտեվորում, որը աչքի է ընկնում շրջակա տարածքի ֆոնի վրա ստեղծված խիստ համաչափությամբ: Ազատության զգացումը տվյալ ոճի կարևորագույն ասպեկտներից է: Ինտերիերում առավել հաճախ հանդիպում են կամարակապ սյուներ, բուխարիներ, գոբելեններ և որմնանկարներ, բարձր որակի կտորեղեն, հարուստ զանգվածային ջահեր: Սակայն միևնույն ժամանակ կլասիցիստական ինտերիերը աչքի չի ընկնում պարագաների առատությամբ:

Նորագույն ժամանակաշրջան: XIX հարյուրամյակում ճարտարապետության բնագավառում տեղի ունեցած իրադարձությունները կապված են հասարակության զարգացման խոր փոփոխությունների հետ: Ճարտարապետները, զրկված լինելով հետագա զարգացման մեկ ամբողջական պատկերացումից, դիմում են անցած էտապների օգնությանը, ինչի արդյունքում սկիզբ է առնում Էկլեկտիկայի ճարտարապետական ոճը: Էկլեկտիզմը

առանձնատան ինտերիերում երկու կամ երեք իրար մոտիկ ոճերի համադրությունն է, որին բնորոշ է տեքստիլի մեծ քանակությունը, փափուկ կորացված ֆորմաները, դեկորի առատությունը: Այն իր մեջ է ներառում տարատեսակ ոճերի լավագույն առանձնահատկությունները, ինչը նպաստում է ընդհանրական կոմպոզիցիաների ստեղծմանը, որոնցում անցյալ ժամանակաշրջանների դետալներն ու առարկաները ներդաշնակ կերպով միահյուսվում են ճարտարապետական լուծումներով, գույնով և տեքստուրայով: Փորված, կոր կամ էլ պտտված առարկաները <<կենդանի>> և դինամիկ տեսք են ստանում:

19-րդ դարի վերջում ճարտարապետության բնագավառում գոյություն ունեցող հակասությունները սրվում են: Էկլեկտիկայի հանդեպ ձևավորված հակակրանքը հանգեցնում է նոր ոճի՝ մոդեռնի ստեղծմանը, որը, սկիզբ առնելով Բելգիայում, շատ արագ տարածում է գտնում ողջ Եվրոպայում: Այն իր վրա չէր կրում որևէ ազգային, բնակլիմայական առանձնահատկություններ և ամենուրեք նույնն էր: Մոդեռնի ճարտարապետությունը յուրահատուկ ուշադրություն էր դարձնում ժամանակակից կոնստրուկցիաներին, շինարարական ու հարդարման նյութերին (կերամիկական սալիկներ, երեսպատման աղյուս: Որպես նոր շինանյութ ճարտարապետներն օգտագործում էին մետաղը, երկաթբետոնը, որոնք մինչ այդ քողարկվում էին սվաղով կամ քարե երեսպատումով: Մոդեռնը առավել վառ արտահայտվում էր առանձնատներում, ինչպես նաև հասարակական շինություններում: Մոդեռն ոճի առանձնատան արտաքին տեսքը՝ ծավալը, բխում էր ներքին տարածության հատակագծային կառուցվածքից: Ներքին տարածությունը որոշում էր շենքի ընդհանուր կերպարը: Ֆասադները ասիմետրիկ, կենդանի օրգանիզմի նմանվող գոյացություններ էին, որոնք միևնույն ժամանակ հիշեցնում էին բնական ֆորմաներ: Մոդեռնի ֆորմաների և զարդանախշերի նախատիպ են ծառայել ինչպես բնության ֆորմաները, այնպես էլ անցյալի ոճերի դիմագծերը, որոնք ստիլիզացիայի միջոցով ենթարկվեցին արմատական վերաիմաստավորման: Ի տարբերություն անցյալի ինտերիերների, մոդեռն ոճի առանձնատան ներքին տարածությունը կազմակերպվում էր՝ չենթարկվելով որևէ օրինաչափության: Դրա մասին են վկայում պատերի ասիմետրիկ ֆորմաները, դռների և պատուհանների կամայական ձևերը, բազմամակարդակ հատակը, և առաստաղների գիպսե պլաստիկան:

XX-րդ դարասկզբին քաղաքների թվի ավելացման հետևանքով կանաչապատման ոչնչացման արդյունքում ի հայտ եկան մի շարք էկոլոգիական և սոցիալ-հասարակական խնդիրներ, որոնց հետ ծանոթ չէին նախորդ դարաշրջանները: Դրանց թվում էր բնակելի տարածքի խնդրի լուծումը, որը դարձավ սոցիալական խնդիրների լուծման անբաժանելի մասը և մեթոդը: Արդյունքում ձևավորվեց ռացիոնալիստական, այսինքն՝

բանականության սկզբունքը, որի իմաստը բնակելի տան կառուցվածքի և դրանում իրականացվող կենցաղային և արտադրական գործընթացների կատարյալ համապատասխանեցումն էր: Ռացիոնալիզմի ներկայացուցիչները հիմնում էին գեղարվեստաճարտարապետական դպրոցներ, որոնցից ամենանշանավորը՝ **Բաուհաուսը**, սկիզբ առավ 1919 թ. Գերմանիայի Վայմար քաղաքում: Չոր կոնստրուկտիվ ֆորմաները, երկրաչափական գծերի խստությունը, այլ կերպ ասած, պարզ ֆորմաներով կահույքը Բաուհաուսի հիմնական բնորոշ դիմագծերն էին: Այս դպրոցին բնորոշ էր նաև դեկորատիվ կիրառական նմուշների և ընդհանրապես ինտերիերի բաղկացուցիչների մասսայական արտադրության գաղափարն ու իրագործումը: Բաուհաուսից ազդեցություն կրելով՝ 1920թ-ին Մոսկվայում հիմնվում է բարձրագույն գեղարվեստատեխնիկական արվեստանոցը՝ <<**ВХУТЕМАС**>>-ը, (կոնստրուկտիվիզմ), որի շրջանավարտներից էին նաև հայ անվանի ճարտարապետներ Կարո Հալաբյանը, Գևորգ Քոչարը, Մարտին Մազմանյանը: Ռացիոնալիզմը և կոնստրուկտիվիզմը իրենց հետքը թողեցին ճարտարապետական տարատեսակ նոր ուղղությունների հետագա զարգացման վրա: 20-րդ դարասկզբից մինչը 1970 թ. ընկած ժամանակշրջանում սկիզբ առած նոր ուղղությունները ընդունված է կոչել մոդեռնիզմ տերմինով:

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՌԱՆՁՆԱՏԱՆ ԻՆՏԵՐԻԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՏԱՐՐԵՐԸ

Լույսի առկայությունը, արհեստական լուսավորության տեսակներն ու լույսի մատուցումը ժամանակակից (առանձնատան) ինտերիերում: Բնական լույսի և արհեստական լուսավորության կարևորության ընդգծումն ու լուսատու սարքերի ծագման, զարգացման պատմությունը: Բնակելի տարածության ինտերիերում ճիշտ և հետաքրքիր լուսավորություն ապահովելը խիստ բարդ է, պահանջում է մեծ վարպետություն ու գիտելիքներ: Գրագետ տեղադրված լուսային կետերը և բնական լույսի ճիշտ ուղղորդումը կարող են ամենահամեստ սենյակը վերափոխել, դարձնել ավելի ընդարձակ, իսկ տարածության հարդարանքը՝ ավելի հետաքրքիր: Արհեստական լուսատու սարքերի պատմա-աշխարհագրական ու էսթետիկ բազմազանությունը պատմության բոլոր փուլերում հնարավորություն է ընձեռել ակտիվորեն կիրառել լույսի այդ ֆանտաստիկ հնարավորությունը:

Կահույքի դերը բնակելի տան ինտերիերում: Կահույքը ձևավորում է մարդու կենցաղավարության հիմնական տարածքի իրեղեն աշխարհը: Դարաշրջանները փոխվում են, գյուղական կոպիտ կահույքին հաջորդում է մոդեռնի նրբագեղ կահավորանքը, շքեղությունը փոխարինվում է հասարակ գեղեցկությամբ, իսկ կահույքը չի կորցնում իր կարևորությունն ու

կիրառականությունը՝ հանդիսանալով մարդկային կացութաձևի հիմնական բնորոշիչներից մեկը:

Բնակելի տան ինտերիերը իրենից ներկայացնում է ամբողջական, մտածված գաղափարի իրեղեն արտահայտություն, և կահույքը, առաջին հերթին, պետք է լիովին համապատասխանի այդ գաղափարին ու ընդգծի միջավայրի հարմարավետությունն ու գեղեցկությունը: Քննվում է կահույքի ստեղծման և կիրառության պատմությունը՝ սկսած պրոտոմոդեռն շրջանից՝ Դասական անտիկ շրջան, Միջնադարյան շրջան, Նոր ժամանակներ: Ապա քննարկվում է կահույքի առանձին տեսակների զարգացումը՝ սկսած XIX դարի կեսերից: Բացի կահույքից ինտերիերի ձևավորման մեջ խիստ կարևոր դեր ունեն տեքստիլը, սպասքը, դեկորատիվ-կիրառական արվեստի նմուշները:

Ինտերիերի այլ բաղկացուցիչներ: Քննվում են բնակելի ինտերիերի հոգեբանական և միջավայրաստեղծ մյուս գործոնները՝ գործվածքը, սպասքը, դեկորատիվ-կիրառական արվեստի նմուշներն ու արդի աշխարհում շատ հարգի համարվող ճապոնական իկեբանայի արվեստը:

Գործվածքը յուրաքանչյուր ինտերիերի և հատկապես բնակելի տան ներքին տարածության հարդարման ու միջավայրի ստեղծման կարևորագույն բաղկացուցիչներից է: Դեռևս նախնադարում, երբ հյուղակներում ու քարանձավային բնակելի տարածքներում արվում էին փորվածքներ, կրակի ծուխը դուրս հանելու կամ լուսավորություն ներս բերելու համար, դրանք ծածկվում էին որևէ հարդային գործվածքով կամ թաղիքով, որոնք էլ գուցե հենց վարագույրների նախատիպն են հանդիսանում:

Գործվածքի կիրառությունը ինտերիերում ունի ինչպես ֆունկցիոնալ, այնպես էլ գեղարվեստական նշանակություն: Տարբեր մակերևույթի, գույնի, ձևի ու չափերի տեքստիլը՝ վարագույրները, անկողնու ծածկոցները, կահույքի երեսպատումը, բարձերը, դեկորատիվ գործվածքները մեծ հաջողությամբ ձևավորում են ցանկալի միջավայր և դյուրին են կիրառության ու ընտրության համար:

Խոհանոցը բնակելի տան կարևորագույն հատվածներից մեկն է, իսկ խոհանոցի կահավորանքից ու հարդարանքից զատ, բնակիչների համար խիստ կարևոր է այն **սպասքը**, որն օգտագործվում է և շրջապատում նրանց:

Սկսած նախնադարից, երբ մարդիկ արդեն տիրապետում էին կրակ ստանալու հմտությանը, անհրաժեշտություն առաջացավ սնունդը եփել հատուկ անոթներում, ինչի համար լավագույնս կարող էր ծառայել կավը: Մարդիկ սկսեցին կավից պատրաստել ամենատարբեր նշանակության սպասք, դեկորատիվ իրեր, որոնք հետզհետե սկսեցին նաև հարդարվել տվյալ քաղաքակրթության հավատալիքներին, գեղարվեստական ու կրոնա-ծիսական պատկերացումներին բնորոշ մոտիվներով: Ժամանակի ընթացքում կիրառական բնույթը ձևափոխվեց դեկորատիվ-կիրառականի, և կերամիկան իր

բոլոր դրսևորումներով (հում կավ, թրծած կավ՝ տեռակոտա, հախճապակի և այլն) սկսեց ակտիվորեն կիրառվել և կարևորագույն տեղ զբաղեցնել մարդկանց կենցաղում: Ներկայումս սպասքը կարևորագույն սոցիալական բնույթի երևույթ է և ճիշտ ընտրված սպասքը կարող է լինել շատ պրակտիկ, գեղեցիկ, կարող է բարերար ազդեցություն ունենալ մարդու տրամադրության ու ախորժակի վրա:

Դեկորատիվ-կիրառական արվեստի նմուշներ: Ընդհանրապես, դեկորատիվ-կիրառական արվեստի նմուշներն իրենց ուրույն ու հատուկ տեղն ունեն մենատան ինտերիերի ձևավորման մեջ բոլոր սենյակներում ու տարբեր ենթատեքստով: Հատկապես խիստ ակտուալ են կերամիկական, ապակե, հախճապակե ու փայտե իրերը՝ բազմագույն ու բազմառճ և բազմաֆունկցիոնալ: Այս նմուշների օգնությամբ կարելի է շատ հետաքրքիր մթնոլորտ, անսպասելի շեշտեր ու կոլորիտ հաղորդել սրահին, հարստացնել տպավորությունը, բարձրացնել ոճային հակադրությունները և պարզապես գեղարվեստականություն հաղորդել ֆունկցիոնալ ու բանալ երևույթներին:

Բուսականության դերը ինտերիերում՝ Իկեբանա: Դժվար է սահմանել այն ճշգրիտ ժամկետը, թե եվրոպական քաղաքակրթության պատմության ընթացքում երբ սկիզբ առավ ծաղիկների «սենյակային կյանքը»: Սակայն կարելի է հստակորեն նշել, որ ինտերիերում ծաղիկների օգտագործման խթաններից էին բազմաթիվ երկրների կողմից կատարվող արշավանքները, որոնց հաջորդող մշակութային հետևանքներից մեկն էր այդ ազգությունների ծանոթացումը միմյանց այգեգործական ավանդույթների, բուսական աշխարհի և տարբեր էկզոտիկ ծաղիկների հետ, որոնց աճեցման և պահպանման համար սենյակային պայմաններ էին պահանջվում: Սակայն ինչքան էլ որ տպավորիչ կարող է թվալ ծաղիկների կողմից եվրոպական ինտերիերում տեղ գրավելու երևույթը, ինտերիերը ծաղկեփնջերի կոմպոզիցիաներով, ծաղկամաններով ձևավորելու համար մի նոր հզոր խթան եղավ արևելքը, ավելի կոնկրետ Ճապոնիան:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

XIX-XX ԴԴ. ՀԱՅԿԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՄԵՆԱՏՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ: ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՌԱՆՁՆԱՏԱՆ ԻՆՏԵՐԻԵՐԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Հայկական քաղաքային առանձնատները: Պատմական ակնարկ: Այստեղ քննվում են XIX դարի հայկական քաղաքատիպ բնակելի տները, մասնավորապես, Գյումրու բնակելի տների ճարտարապետությունն ու ներքին կառուցվածքը, ինչպես նաև, Երևանի XIX-XX դդ. բնակելի քաղաքային մենատների ինտերիերները: Նոր դարաշրջանը իր հետ բերեց նաև քաղաքաշինական իդեալներ, հարմարվետության ու գաղափարա-սոցիալական նոր պայմաններ, ինչով պայմանավորված էլ Հայաստանում

սկսվեց զանգվածային շինարարություն, Երևան քաղաքի հիմնարար վերակառուցում: Այս շրջանում սկսում են կարևորվել առանձնատների ինտիմ-պաշտպանիչ ֆունկցիաները, Գյումրու և Երևանի մի շարք բնակելի, նույնիսկ մի քանի հարկանի տներ պահպանվել են մինչ օրս և հնարավոր է դիտարկել, չափագրել ու ուսումնասիրել դրանք:

Վերջին տասնամյակներին, հատկապես, սկսած 20-րդ դարի վերջից՝ ԽՍՀՄ փլուզումից և երկաթյա վարագույրի պատռվելուց հետո, Հայաստանի նորանկախ հանրապետությունում սկիզբ առավ քաղաքային և մերձքաղաքային բնակելի միավորների նոր տիպի շինարարություն: Հասարակական և քաղաքական գործընթացների արդյունքում առաջացած ու հետզհետե խորացող սոցիալական անհավասարությունն իր հետ բերեց բնակելի միջավայրի կազմակերպման և հարդարման նոր, մինչ այժմ չտեսնված բազմազանություն և նյութատեխնիկական նորարարություններ: Հայ ճարտարապետներն ու դիզայներները սկսեցին ակտիվորեն ինտեգրվել միջազգային տենդենցներին ու հոսանքներին, ծանոթանալ եվրոպական արդի դիզայներական հնարքներին, միջոցներին և վիզուալ ու տեխնոլոգիական լուծումներին: Հայկական ժողովրդական տան մոդելը, կարծես, կորցնելով իր ակտուալությունը և հետաքրքրությունը, իր տեղը զիջեց եվրոպական, հաճախ նաև, ամերիկյան մենատների տարածված տիպերին:

Ժամանակակից քաղաքային հայկական մենատան ինտերիերը: Այստեղ քննարկվում են վերջին տարիներին Երևանի տարբեր հատվածներում կառուցված հարուստ մենատները, դրանց հատակագծային, հարդարման և կառուցվածքային առանձնահատկությունները: Փորձ է արվում ցուցադրել համաշխարհային մշակութային ժառանգության դրսևորումները՝ դրանց ներքին հարդարման համակարգում: Այս մենատների հիմնական մասն ունի մոդեռնիստական լուծումներ, հագեցած է ժամանակակից տեխնոլոգիական լուծումներով, միջազգային դիզայներական փորձի ուրույն մեկնաբանումներով:

Հայկական մերձքաղաքային առանձնատները: Պատմական ակնարկ: Այս ենթագլխում քննարկվում է հայկական ժողովրդական (համայնքային) բնակելի տան կառուցվածքն ու ինտերիերը՝ գլխատան ավանդական հորինվածքի օրինակով: Հայոց կյանքը մշտապես կենտրոնացած է եղել տան և ընտանիքի շուրջ՝ նախնյաց ավանդույթների ու պատմական հայրենիքի հետ անխախտ կապի մեջ: Թեև հայերի գյուղական տների, ընտանեկան ավանդույթների ու սովորույթների մասին տեղեկությունները մեզ են հասնում միայն սկսած 19-րդ-վաղ 20-րդ դարերի աղբյուրներից, այդուհանդերձ, դրանց արմատները շատ խորն են ու գնում են դարերի խորքը: Հայոց ժողովրդական բնակելի տան տիպերը ձևավորվել են երկարատև ժամանակաշրջանում համապատասխան բնակլիմայական, տնտեսական, պատմական և սոցիալական պայմաններում: XIXդ. վերջից- XXդ. ամենատարածված բնակելի

տան տիպը գլխատունն էր: Ապա ազգագրական և պատմագիտական աղբյուրների հիման վրա ներկայացվում է հայկական համայնքային մենատների կահույքն ու ներքին հադարանքը:

Հայկական ժամանակակից մերձքաղաքային մենատները: Այստեղ դիտարկվում են վերջին տարիներին ՀՀ-ում կառուցված մերձքաղաքային մենատները, իրենց կառուցվածքային և հարդարման համակարգերով: Այս մենատներում նույնպես առկա են մոդեռնիստական վառ շեշտադրումները, երբեմն նաև ազգային-ավանդական մանրամասները՝ գորգ, բուխարի, քարե երեսպատում և այլն: Ըստ էության դժվար է հստակ տարանջատել քաղաքային և մերձքաղաքային մենատների տարբերություններն ու նմանությունները, հաճախ կարելի է նկատել, որ ճարտարապետն ու դիզայները նույնիսկ անտեսում են տեղանքի՝ կլիմայական և աշխարհագրական առանձնահատկությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվի առնելով վավերագրական նյութերի սակավությունը, սկզբնաղբյուրների ոչ հստակ նկարագրությունները և անձնական տարածքի իրավունքի պահպանության կողմը, ուսումնասիրության գիտական առանցքային խնդրի մասով հանգեցինք հետևյալ եզրահանգումների.

- Պատմական իրադարձությունների ու շրջադարձային երևույթների արդյունքում հայոց բնակելի առանձնատան պատմության ընթացքը հաճախ չի զարգացել լիարժեք կերպով, այնուհետև նորից ստացել է իր բնականոն ընթացքը՝ կախված քաղաքային միջավայրի, համապատասխան սոցիալական խավի առկայությունից:
- Հայկական առանձնատների ինտերիերները ժամանակի ընթացքում ենթարկվել են բազմաթիվ փոփոխությունների՝ միաժամանակ պահպանելով ազգային գեղարվեստական և կենցաղային առանձնահատկությունները:
- 19-րդ դարի վերջի ու 20-րդ դարի սկզբի հայկական քաղաքային առանձնատները իրենց վրա կրել են, նաև, եվրոպական տարբեր ոճերի ազդեցությունը (Կլասիցիզմ, Մոդեռն, Էկլեկտիզմ):
- Նույն ժամանակաշրջանում, Երևան և Գյումրի քաղաքներում կառուցված Աֆրիկյանների, Տեր Ավետիքյանների, մի քանի այլ ունևոր ընտանիքների առանձնատների, ինչպես նաև Ս. Մերկուրովի մենատան ինտերիերների ձևավորումը վկայում է հաստատված բարձր գեղարվեստականության մասին, ինչի վառ օրինակն է հանդիսանում առանձնատների ինտերիերներում կիրառվող՝ արվեստի մակարդակի հասցված ու բարձր վարպետությամբ մշակված փայտե կահույքը, շքեղ շրջանակների մեջ վերցված մեծ հայելիները, թավշե վարագույրները և այլն:

- Հին Երևանի առանձնատների ինտերիերների ձևավորման այստեսակ հետաքրքիր և ավանդական լուծումները չեն փոխանցվել ժամանակակից քաղաքային առանձնատներին:
- Ժամանակակից հայկական առանձնատների ինտերիերի դիզայնը շատ բազմազան ու ոչ միանշանակ պատկեր ունի: Քաղաքներից դուրս գտնվող գյուղական տիպի առանձնատներում առավել հաճախ են օգտագործվում հայկական ավանդական ատրիբուտները: (գորգ, բուխարի, կարպետ):
- Նկատեցինք, որ մի քանի առանձնատների ինտերիերների ձևավորման հնարքները երբեմն չեն համապատասխանում տվյալ տարածաշրջանի կլիմայական պայմաններին և դեկորատիվ բնույթ են կրում (բուխարիները՝ հարավային, շրջաններում, կամ մեծ ապակեպատ մակերեսները, առավել ցրտաշունչ կլիմայական պայմաններ ունեցող շրջաններում):
- Տեղանքի քաղաքաշինության բնույթը նույնպես իր ազդեցությունն է թողնում առանձատների արտաքին և ներքին ձևավորման լուծումների վրա:
- Համոզվեցինք, որ հայկական ժամանակակից քաղաքային և քաղաքից դուրս գտնվող առանձնատներն իրենց ներքին հարդարանքով և ընդհանուր գեղարվեստական լուծումներով հաճախ կրկնում են միմյանց:
- Հիմնականում, պայմանավորված լինելով դիզայներ-ճարտարապետի ու սեփականատիրոջ անձնային ճաշակով, ժամանակակից հայկական առանձնատան ինտերիերը դրսևորվում է այդ պահին աշխարհում գրանցված փորձառությամբ ու նորաձևության միտումներով:
- Խրախուսելի են ժամանակակից առանձնատների ինտերիերների ձևավորման այն օրինակները, որտեղ ինտերիերի դիզայնի լուծումները օրգանապես կապված են շինության ընդհանուր ճարտարապետության և ներքին տարածական հորինվածքի հետ:

Ատենախոսության թեմայով հեղինակի հրատարակած աշխատությունները

1. Բագրատ Գյուլխասյան, <<Գորգը հայկական ինտերիերում>> Տարեգիրք ԵՊԳԱ, 2012, էջ 146-157,
2. Բագրատ Գյուլխասյան, <<Հայաստանի քարանձավային բնակավայրերը և դրանց ներքին հարդարանքը>>, Բազմավեպ հանդես , 2012, 1/2 հատոր, էջ 16 ,
3. Բագրատ Գյուլխասյան, <<Հայկական հնագույն բարձրաշխարհիկ կահույքը>>, Տարեգիրք ԵԳՊԱ, 2013,1, էջ 179-189:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
Բնակելի տան գեղարվեստական ձևավորման առանձնահատկությունների պատմությունից

- Քարանձավային բնակատեղիներ. Քարանձավը մարդու առաջին կացարան
- Առանձնատան դասական տիպերը և դրանց ինտերիերի գեղարվեստական ձևավորումը
- Միջնադարյան բնակելի տան առանձնահատկությունները
- Առանձնատան ինտերիերի զարգացումը XV-XIX դդ.:
- Նորագույն ժամանակաշրջան
- Բազմաձևություն. Ինտերիերի գեղարվեստական ձևավորման ժամանակակից միտումները

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
Ժամանակակից առանձնատան ինտերիերի հիմնական բաղկացուցիչ տարրերը

- Լույսի առկայությունը, արհեստական լուսավորության տեսակներն ու լույսի մատուցումը ժամանակակից (առանձնատան) ինտերիերում
- Կահույքի դերը բնակելի տան ինտերիերում
- Ինտերիերի այլ բաղկացուցիչներ

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
XIX-XX դդ. Հայկական մեծ տների պատմությունից: Հայկական ժամանակակից առանձնատան ինտերիերի գեղարվեստական ձևավորումը

- Հայկական քաղաքային առանձնատները: Դասական ակնարկ
- Հայաստանի քաղաքային առանձնատան ինտերիերը
- Հայկական մերձքաղաքային առանձնատները: Դասական ակնարկ
- Հայկական ժամանակակից մերձքաղաքային առանձնատները

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- Դասական իրադարձությունների ու շրջադարձային երևույթների արդյունքում հայոց բնակելի առանձնատան պատմության ընթացքը համախ չի զարգացել լիարժեք կերպով, այնուհետև նորից ստացել է իր բնականոն ընթացքը կախված քաղաքային միջավայրի, համապատասխան սոցիալական խավի առկայությունից:
- Հայկական առանձնատների ինտերիերները ժամանակի ընթացքում ենթարկվել են բազմաթիվ փոփոխությունների՝ միաժամանակ պահպանելով ազգային գեղարվեստական և կենցաղային առանձնահատկությունները:
- 19-րդ դարի վերջի ու 20-րդ դարի սկզբի հայկական քաղաքային առանձնատները իրենց վրա կրել են, նաև, եվրոպական տարբեր ոճերի ազդեցությունը (Կլասիցիզմ, Մոդեռն, Էկլեկտիզմ):
- Նույն ժամանակաշրջանում, Երևան և Գյումրի քաղաքներում կառուցված Աֆրիկյանների, Տեր Ավետիքյանների, մի քանի այլ ուսնոր ընտանիքների առանձնատների, ինչպես նաև Ս. Մերկուրովի մենատան ինտերիերների ձևավորումը վկայում է հաստատված բարձր գեղարվեստականության մասին, ինչի վառ օրինակն է հանդիսանում առանձնատների ինտերիերներում կիրառվող արվեստի մակարդակի հասցված ու բարձր վարպետությամբ մշակված փստե կահույքը, շքեղ շրջանակների մեջ վերցված մեծ հայելիները, թավշե վարագույրները և այլն:
- Հին Երևանի առանձնատների ինտերիերների ձևավորման այստեսակ հետաքրքիր և ավանդական լուծումները չեն փոխանցվել ժամանակակից քաղաքային առանձնատներին:
- Ժամանակակից հայկական առանձնատների ինտերիերի դիզայնը շատ բազմազան ու ոչ միանշանակ պատկեր ունի: Քաղաքներից դուրս գտնվող գյուղական տիպի առանձնատներում առավել համախ են օգտագործվում հայկական ավանդական ատրիբուտները: (գորգ, բուխարի, կարպետ):
- Նկատեցինք, որ մի քանի առանձնատների ինտերիերների ձևավորման հնարքները երբեմն չեն համապատասխանում տվյալ տարածաշրջանի կլիմայական պայմաններին և դեկորատիվ բնույթ են կրում (բուխարիները՝ հարավային, շրջաններում, կամ մեծ ապակեապատ մակերեսները, առավել ցրտաշունչ կլիմայական պայմաններ ունեցող շրջաններում):
- Տեղանքի քաղաքաշինության բնույթը նույնպես իր ազդեցությունն է թողնում առանձատների արտաքին և ներքին ձևավորման լուծումների վրա:
- Հանդգնեցինք, որ հայկական ժամանակակից քաղաքային և քաղաքից դուրս գտնվող առանձնատներն իրենց ներքին հարդարանքով և ընդհանուր գեղարվեստական լուծումներով համախ կրկնում են միմյանց:
- Հիմնականում, պայմանավորված լինելով դիզայներ-ճարտարապետի ու սեփականատիրոջ անձնային ճաշակով, ժամանակակից հայկական առանձնատան ինտերիերը դրսևորվում է այդ պահին աշխարհում գրանցված փորձառությամբ ու նորաձևության միտումներով:

ГЮЛЬХАСЯН БАГРАТ СТЕПАНОВИЧ

ДИЗАЙН ИНТЕРЬЕРОВ СОВРЕМЕННЫХ ОСОБНЯКОВ АРМЕНИИ

РЕЗЮМЕ

О развитии истории человечества самым непосредственным образом свидетельствует, в первую очередь, жилая среда. В ходе развития истории всего человечества, как и истории армянского народа, жилой дом и его архитектурно-конструктивные системы и внутреннее художественное убранство играли важнейшую роль. Дом и его интерьер во все времена были отображением социально-общественных, этнических и художественных тенденций своего времени. Ныне в этом смысле нам чрезвычайно интересно и не менее важно рассмотрение и выяснение современных представлений и тенденций на базе всего исторического наследия.

В рамках данного исследования впервые сделана попытка изучения художественного оформления внутреннего пространства современных армянских особняков, прослеживания современных тенденций формирования и развития этой системы методом исторического и искусствоведческого сопоставительного анализов. Данный труд изучает дизайн интерьеров современных армянских жилых особняков, исследуя и представляя также мировую историю развития убранства жилой среды и эволюцию армянского традиционного дома, основываясь на археологической, источниковедческой литературе и фактических примерах.

В настоящее время, после принятия независимости РА, беспрецедентные объемы строительства особняков, тем не менее, должным образом не изучены, нет классификации и анализа характерных, для этой системы, специфических особенностей разновидностей домов, их расположения и убранства. Это в первую очередь объясняется правом на личную жизнь и отсутствием соответствующего материала.

В ходе источниковедческих, исторических и аналитико-сопоставительных исследований мы рассмотрели мировой опыт формирования и развития дизайна интерьера особняка, досконально проанализировали воссоздающие домашнюю среду важнейшие факторы – освещение, цветовые решения, мебель, и прочую атрибутику, на конкретных примерах рассмотрели их роль и определенное воздействие. Перейдя к изучению армянской жилой среды – армянского

традиционного дома, а затем и к истории развития особняков, мы рассмотрели таковые в городе и пригороде. Так же, как в случаях исследования мировых образцов, здесь мы провели анализ и интерпретацию характерных для внутреннего и внешнего оформления дома атрибутов и образующих жилую среду основных факторов. В процессе исследования наше внимание было сосредоточено на более чем пятидесяти, построенных в РА за последние два десятилетия, особняках, предназначенных для представителей элитного либо состоятельного слоя населения. Выявив общепринятые принципы убранства и декорирования, а также отдельные случаи отклонений от них, и интегрировав их в рамках существующего международного опыта, мы попытались вкратце представить основную картину мотиваций и способов строительства и обустройства жилых особняков в РА в настоящее время. Нами были рассмотрены две основные группы армянских особняков – городские и загородные, и была попытка определить их системную общность и различия в убранстве, в зависимости от окружающей среды и эстетического восприятия домовладельца. Невзирая на немногочисленность научных, источниковедческих и документальных материалов, исследований по данной теме, а также на сложности доступа к изучаемым объектам, мы считаем, что проделанная работа, приобретенные знания и довольно обширный визуальный материал вновь послужат в будущем воплощению в жизнь систем армянских традиционных художественных ценностей, ряда артефактов народной атрибутики и концептуальных идей. Мы попытаемся синтезировать тенденции мирового опыта, армянские традиции и современные процессы, актуализировать традиционный армянский стиль, совместив его со специфическими особенностями современного быта. Считаем крайне необходимым возрождение, восстановление и актуализацию традиционного вида армянского особняка. Данный труд является всего лишь первым шагом на долгом пути, предусмотренном для изучения понятия армянского дизайна интерьера и развития соответствующей научной системы.

BAGRAT STEPAN GYULKHASYAN

INTERIOR DESIGN OF ARMENIAN CONTEMPORARY RESIDENTIAL HOUSES

SUMMARY

Residential environment is one of the immediate witnesses of human development history. House and house interior are manifestations of human household and way of living, a vivid evidence of a specific cultural stratum. House had its important mission and role in the life of Armenian people. House is a sacred environment for Armenians and its decorations (interior) are quite interesting and typical. The present paper studies the interior design of contemporary Armenian houses.

In the framework of the present research for the first time an attempt is made to study the aesthetical decoration of the inner spaces of the contemporary Armenian houses and through comparative historical and aesthetical analysis to follow the formation and development trends of that system. The present research studies the interior design of contemporary residential houses by examining and presenting also the international history of residential space design development as well as the evolution of Armenian traditional houses based on archaeological and scientific literature and specific examples.

The huge spectrum of construction of private houses in Armenia since its independence was not adequately examined and discussed though, there were no classifications and analysis of the types, placement, peculiarities of the decorative systems of houses. First of all this fact can be explained by privacy right of personal life and absence of relevant materials.

Through a resource-intensive, historical and comparative analysis research we examined international experience in formation and development of house interior design as well as we discussed the most important factors of residential environment – light, color themes, furniture and other attributes. Later we covered the history of development of Armenian houses by examining urban and suburban Armenian houses. More than fifty houses that were built in the Republic of Armenia designated for upper and wealthy class during the last two decades were in the focus of our research. We attempted to summarize the picture of the present residential house building practice and decoration motives by revealing the commonly applicable principles of decorations, systems of exceptions and by generalizations of the findings within the international context.

We examined the contemporary Armenian houses in two main groups – urban and suburban, attempted to distinguish similarities and differences of the interior design depending on the environment and aesthetical perceptions of the owners.

Despite the scarcity of available materials, novelty of the topic and difficulties in accessing the residential houses, we think that the completed research, acquired knowledge and abundant visual materials in the future will contribute to the revival of traditional Armenian aesthetical systems, a number of folk (popular) attributes and concepts without losing and wasting the peculiarities of national culture and living habits while recognizing the international experience and trends in this area.

We will try to synthesize episodes from international experience, Armenian traditional and contemporary processes, we will try to modernize the national-traditional by unifying them in the context of modern life. We consider it is extremely important to revive, restore and modernize the image of traditional Armenian houses. The present research is merely a first step in a lengthy journey, which aims to initiate studies and development of relevant scientific framework of the Armenian interior design.